ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԼԻԱՆՆԱ ՊՈԳԵՏԻ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ՑՈՒՑԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՐԴԻ ՀԱՅՈՑ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Է.00.04 «Ազգագրություն» մասնագիտությամբ
պատմական գիտությունների թեկնածուի
գիտական աստիճանի հայցման ատենախոսության
ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ – 2017

ИНСТИТУТ АРХЕОЛОГИИ И ЭТНОГРАФИИ
НАЦИОНАЛЬНОЙ АКАДЕМИИ НАУК
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

ЛИАННА ПОГЕТОВНА ГЕВОРГЯН

ЭТНОГРАФИЧЕСКИЕ ЭКСПОЗИЦИИ В КОНТЕКСТЕ ФОРМИРОВАНИЯ СОВРЕМЕННОЙ АРМЯНСКОЙ ИДЕНТИЧНОСТИ

АВТОРЕФЕРАТ
Диссертации на соискание ученой степени
кандидата исторических наук по
специальности 07.00.04 «Этнография»

Ереван – 2017

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ
հնագիտության և ազգագրության ինստիտուտի
գիտական խորհրդում
Գիտական ղեկավար՝ պ.գ.դ. Հ. Տ. Մարության
Պաշտոնական ընդդիմախոսներ՝ պ.գ.դ. Է. Խ.
Պետրոսյան

պ.գ.թ. Ա. Խ. Սարգսյան

Առաջատար կազմակերպություն՝ Սարդարապատի հերոսամարտի հուշահամալիր, հայոց ազգագրության և ազատագրական պայքարի պատմության ազգային թանգարան:

Պաշտպանությունը կայանալու է 2017 թ. նոյեմբերի 16-ին, ժ. 14^{00}-ին ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտում գործող ԲՈՀ-ի 007 հնագիտության և ազգագրության մասնագիտական խորհրդում (հասցեն՝ Երևան-0025, Չարենցի 15):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2017 թ. հոկտեմբերի 16-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար՝
պատմական գիտությունների թեկնածու
Հ. Ա. Մելքոնյան

Тема диссертации утверждена на ученом совете
при Институте археологии и этнографии
Национальной академии наук Республики Армения

Научный руководитель: д.и.н. А. Т. Марутян

Официальные оппоненты: д.и.н. Э. Х. Петросян
к.и.н. А. Х. Саркисян

Ведущая организация: Мемориальный комплекс Сардарапатской битвы, национальный музей этнографии армян и истории освободительной борьбы.

Защита состоится 16 ноября 2017 г. в 14^{00} часов, на заседании специализированного совета 007 ВАК по археологии и этнографии, при Институте археологии и этнографии НАН РА (адрес: Ереван-0025, ул. Чаренца 15)

Автореферат разослан 16-го октября 2017 г.

Ученый секретарь специализированного совета:
кандидат исторических наук
У. А. Мелконян

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳՐԵՐ

Վերջին տարիներին թանգարանին, որպես սոցիալական հիշողության ինստիտուտի, առանձնահատուկ տեղ է հատկացվում՝ կապված հասարակության՝ իր արմատների ու ինքնության նկատմամբ աճող հետաքրքրության հետ: Թանգարանային հավաքածուներն ու դրանց հիման վրա ստեղծված

թանգարանային ցուցադրությունները յուրահատուկ գիտագեղարվեստական հաղորդակցական միջավայր են, որտեղ վերականգնվում է առարկայացված հիշողությունը:

Թանգարանային միջավայրի յուրահատկությունը նրանում է, որ այն հնարավորություն է ընձեռում միավորել հաղորդակցման երկու՝ արտաքին (մշակութային երկխոսություն) և ներքին (անհատի վերաբերմունքն անցյալի նկատմամբ) ձևերը: Հենց այս համատեքստում էլ թանգարանը դիտարկվում է որպես ազգային մտահայեցողության և ինքնության ձևավորման միջավայր: Առաջին հերթին խոսքը վերաբերում է ազգագրության թանգարաններին և ազգագրական հավաքածուներ ու ցուցադրություններ ունեցող թանգարաններին, որոնք ավելի քիչ են ուսումնասիրված, քան գեղարվեստական, պատմության և այլ տիպի թանգարանները:[1]

Ազգագրության թանգարանները կարելի է համարել ազգային ինքնության ձևավորման ու ակտիվացման գործիքներից մեկը: Սակայն թանգարանների աշխատակիցներն արդյո՞ք գիտակցում են իրենց դերն արդի հայ ինքնության ձևավորման գործում: Ի՞նչ միջոցներ, գործունեության ոլորտներ, նոր մեխանիզմներ կան դրա համար: Արդյո՞ք թանգարանները պատրաստ են ստանձնել այդ դերը՝ հաշվի առնելով XXI դարի նոր միտումներն ու մրցակցությունը:

Թեմայի արդիականությունը: Հայ ինքնության ձևավորման և ակտիվացման գործում ազգագրության, ինչպես նաև ազգագրական իրերի հավաքածուներ և ցուցադրություններ ունեցող թանգարանների դերի ու գործառույթների ուսումնասիրության ***արդիականությունը*** պայմանավորված է մի քանի հանգամանքով.

- Թանգարանը՝ որպես սոցիոմշակութային ինստիտուտ, կոչված է պատմամշակութային ժառանգության պահպանմանը, ուսումնասիրմանն ու փոխանցմանը, և իր կայացման ընթացքում միշտ համարվել է սոցիալական հիշողության՝ ինքնության ձևավորման

[1] Ատենախոսության շրջանակներում դիտարկվում են ազգագրության մասնագիտացված, պատմության, որոշ երկրագիտական, հուշային, ինչպես նաև սփյուռքում գործող թանգարանների համապատասխան ցուցադրությունները:

բաղադրիչներից մեկի, պահպանման և վերականգնման վայր,

- XX դարավերջի – XXI դ. սկզբի հասարակական կյանքի տնտեսական և քաղաքական բարեփոխումների հետևանքով պատմաազգագրական թանգարանները զգալի փոփոխություններ են կրում: Սրանով պայմանավորված խնդիր է առաջանում որոշակի շտկում կատարել ժամանակակից աշխարհում թանգարանի առաքելության և նրագիտական, կրթամշակութային, գիտացուցադրական գործունեության մեջ, ինչը կնպաստի ձեռք բերելու այնպիսի գիտելիքներ և հմտություններ, որոնք անհրաժեշտ են զարգացնելու ազգային ինքնության մաս կազմող ներկայի և անցյալի էթնոմշակութային ընկալումը,

- ազգագրական ցուցադրությունների յուրահատկությունն ու արժեքը ներկայացվող բնօրինակ հավաքածուներն ու դրանց դիտողականությունն են: Նման ցուցադրություններով է իրականացվում մի սերնդից մյուսին տեղեկատվության փոխանցումը, դրա զարգացումն ու վերափոխումը ժամանակի և տարածության մեջ՝ նյութական և ոչ նյութական մշակույթի տարրերի միջոցով, որոնք հետագայում վերածվում են հայ ինքնության խորհրդանիշերի,

- ժամանակակից տարբեր հարթակներում թանգարանում պահվող ազգագրական իրերի նմանօրինակների լայն կիրառությունն անհրաժեշտություն է առաջացնում դիտարկել դրանք պատմամշակութային տեսանկյունից՝ անդրադառնալով ազգային ինքնության ձևավորման կամ ակտիվացման գործընթացի վրա դրանց հնարավոր ազդեցությանը:

Ուսումնասիրության **օբյեկտը** թանգարանի՝ որպես սոցիալական հիշողության ինստիտուտի հիմքը կազմող ազգագրական հավաքածուներն ու ցուցադրություններն են, ինչպես և դրանց միջոցով ազգային ինքնությունը պահպանելուն ու ակտիվացնելուն ուղղված գործունեության ձևերն՝ ամբողջությամբ վերցրած:

Ուսումնասիրության **առարկան** հայ ինքնության ձևավորման և/կամ ակտիվացման գործընթացի վրա թանգարանային ազգագրական ցուցադրությունների և արտեֆակտների ունեցած ազդեցության գործառութային ասպեկտն է:

Ուսումնասիրության **նպատակն** է սահմանել ազգագրական ցուցադրությունների և արտեֆակտների դերն արդի հայ ինքնության ձևավորման

գործընթացում: Առաջադրված նպատակին հասնելու համար կարևորվել են հետևյալ խնդիրները.

- վերլուծել թանգարանի, թանգարանային հավաքածուների և ցուցադրությունների ազդեցությունն ազգային ինքնության ձևավորման վրա Հայաստանում՝ դրանց կայացման ընթացքում,
- բացահայտել թանգարանի՝ որպես սոցիալական հիշողության ինստիտուտի և հիշողության պահպանման ձևի գործառույթներն ու խնդիրները հայերի ազգային ինքնության ձևավորման ու ակտիվացման գործում,
- դասակարգել ազգագրական ցուցադրությունների առանձնահատկությունները Հայաստանի և սփյուռքի որոշ թանգարանների օրինակով,
- ներկայացնել ազգագրական հավաքածուները որպես գիտական ուսումնասիրությունների սկզբնաղբյուր և թանգարանային ցուցադրություններում ու հրատարակություններում դրանց դրսևորման ձևերը,
- բացահայտել ազգագրական ցուցադրությունների էությունը՝ թանգարանի կրթամշակութային գործունեության միջոցով ազգային ինքնության ձևավորման և ակտիվացման գործընթացի վրա ունեցած ազդեցության համատեքստում,
- ուսումնասիրել և վերլուծել ազգագրության և ազգագրական ցուցադրություններ ու հավաքածուներ ունեցող թանգարանների գործունեությունն արդի շուկայական հարաբերությունների պայմաններում,
- բացահայտել թանգարանային և ոչ թանգարանային ազգագրական արտեֆակտների ազդեցությունն արդի հայ ինքնության ձևավորման և/կամ ակտիվացման վրա,
- որոշել արդի թանգարանային և ոչ թանգարանային զանգվածային մշակութային միջոցառումների տեղը հայ ինքնության ձևավորման և/կամ ակտիվացման գործընթացում:

Աշխատանքի մեթոդաբանական հիմքը: Ատենախոսության մեթոդաբանական հիմքը պատմական, համակարգային, կառուցվածքային և ֆունկցիոնալ մոտեցումներով իրականացված թանգարանագիտական, ազգագրական, մշակութաբանական, էթնոսոցիոլոգիական, էթնոհոգեբանական գրականության տեսական վերլուծությունն է:

Ուսումնասիրության առարկայի համալիր վերլուծությանը նպաստել են թանգարանագիտության, ազգագրության, մշակութաբանության, պատմության, սոցիոլոգիայի և այլ գիտությունների միջդիսցիպլինար կապերը: Ազգագրության, ինչպես և

ազգագրական հավաքածուներ ու ցուցադրություններ ունեցող այլ թանգարանների ուսումնասիրության ինստիտուցիոնալ մոտեցումը հնարավորություն է տվել գնահատել դրանց գործառույթները՝ ազգային ինքնության ձևավորման ու ակտիվացման վրա ունեցած ազդեցության տեսանկյունից:

Առարկայական մոտեցումը հնարավորություն է տվել թանգարանային իրը դիտարկել որպես ազգային ինքնության ձևավորման ու ակտիվացման վրա հնարավոր ազդեցության աղբյուր:

Առաջադրված խնդիրները լուծելու համար կիրառվել է նաև պատմավերլուծական մեթոդը, որը հնարավորություն է ընձեռել կատարել տարբեր ժամանակաշրջաններում տարատեսակ թանգարանների գործունեության համեմատական վերլուծություն՝ ազգային ինքնության ձևավորման և ակտիվացման համատեքստում:

Ատենախոսության շրջանակում դիտարկվել են ինչպես ազգագրական թանգարանային սկզբնաղբյուրներն իրենց ողջ բազմազանությամբ, այնպես էլ արխիվային նյութերն ու թեմային վերաբերող տեսական ուսումնասիրությունները:

***Աղբյուրները և գրականությունը*:** Ատենախոսության թեմայի վերաբերյալ առանձին տեսակետներ են արտահայտված պատմամշակութային, ազգագրական, սոցիալ-հոգեբանական և թանգարանագիտական տարբեր հետազոտություններում: Խնդրի պատմագրության մեջ կարելի է առանձնացնել հետևյալ թեմատիկ բաժինները.

1. Հիշողության, ինքնագիտակցության, ինքնության հիմնախնդիրներին նվիրված հայրենական և արտասահմանյան ընդհանուր տեսական ուսումնասիրություններ: Հասարակության մեջ ազգային ինքնությունը ձևավորելու և ակտիվացնելու, հիշողության երևույթն ուսումնասիրելու և ազգային ինքնության ձևավորման վրա վերջինիս ազդեցությանն են նվիրված Մորիս Հալբվախի, Պիեռ Նոռայի, Յան Ասսմանի, Հարություն Մարությանի, Եվգենյա Ռոմանովսկայայի և այլոց աշխատանքները: Ատենախոսության մեջ քննարկված են նաև ազգային ինքնությունը ձևավորելու խնդիրներն էթնոհոգեբանական և էթնոսոցիոլոգիական հայեցակարգերի տեսանկյունից՝ Տ. Գ. Ստեֆանենկոյի, Ա. Ա. Նալչաջյանի մենագրության ու հոդվածների, Յու. Վ. Հարությունյանի, Լ. Մ. Դրոբիժևայի, Ա. Ա. Սուսոկոլովի համատեղ աշխատության և այլ

հետազոտությունների հիման վրա: Ուսումնասիրողների մի մասը ազգային ինքնությունը դիտարկում է որպես անձի սոցիալական ինքնության բաղկացուցիչ մաս, որպես հոգեբանական կատեգորիա՝ պայմանավորված սեփական անձը որոշակի ազգին պատկանելու գիտակցությամբ:

2. Հայրենական և արտասահմանյան ընդհանուր տեսական ուսումնասիրություններ թանգարանագիտության և ազգաբանության ոլորտում: Թանգարանի, որպես սոցիոմշակութային ինստիտուտի, առաջին համակողմանի ուսումնասիրությունը XIX դ. վերջին – XX դ. սկզբին իրականացրել է փիլիսոփա Ն. Ֆ. Ֆեդորովը: Թանգարանների գործունեության սոցիալական խնդիրներին, սահմանումներին (Կ. Գ. Լևիկին և Վ. Մ. Հերբստ, Զ. Ա. Բոնամի, Վ. Յու. Դուելսկի, Ժ. Ա. Ռիվյեր) և թանգարանների արդի հիմնախնդիրներին (Ջ. Ստանտոն, Ա. Վ. Լեբեդև, Վ. Ա. Ծնիրելման, Տ. Յու. Յուրենևա, Է. Ա. Շուլեպովա, Կ. Հադսոն, Մ. Ե. Կաուլեն) են նվիրված թանգարանագիտության տեսաբանների մի շարք աշխատություններ: Ազգագրության թանգարանների գործունեության խնդիրները վերհանելու, առանձին առարկայի, ցուցադրության և հավաքածուի՝ որպես սկզբնաղբյուր դիտարկելու, ուսումնասիրելու, ինչպես նաև թանգարանի հրատարակչական աշխատանքները լուսաբանելու համար օգտագործվել են ընդհանուր ազգաբանությանը (Ս. Բ. Հարությունյան, Ս. Ա. Տոկարև, Վ. Պ. Ալեքսեև, Յու. Վ. Բրոմլեյ, Գ. Ե. Մարկով), մշակույթի պատմությանը (Ա. Ֆ. Լոսև, Տ. Վ. Կալուգինա) և հայերի ազգագրությանը (Վ. Բդոյան, Լ. Բարսեղյան, Հ. Խառատյան, Կ. Բազեյան, Գ. Աղանյան, Ս. Պողոսյան, Ֆ. Հանցիորն), «Ժողովուրդներ և մշակույթներ. Հայեր» (Լ. Մ. Վարդանյան, Հ. Գ. Սարգսյան, Ա. Ե. Տեր-Սարգսյան) և այլ աշխատություններ:

3. Հայաստանի պատմության պատմագիտական աշխատություններ, ինչպես նաև թանգարանագիտական ուսումնասիրություններ նվիրված Հայաստանի թանգարանների ստեղծմանը, պատմությանը և գործունեությանը (Կ. Գ. Ղաֆադարյան, Լ. Մ. Վարդանյան, Ա. Ծ. Սիմոնյան, Ստ. Լիսիցյան, Եր. Լալայան և այլք):

4. Որպես սկզբնաղբյուր ուսումնասիրվել են Հայաստանի պատմության, Երևան քաղաքի պատմության, Գյումրու ժողովրդական ճարտարապետության և քաղաքային կենցաղի, մի շարք երկրագիտական ու հուշային թանգարանների, ինչպես նաև Սարդարապատի

հերոսամարտի հուշահամալիր, հայոց ազգագրության և ազատագրական պայքարի պատմության ազգային թանգարանի, Հ. Ծարամբեյանի անվան ժողովրդական ստեղծագործության կենտրոնի, Պատմական միջավայրի պահպանության և պատմամշակութային արգելոց-թանգարանների ծառայության արխիվները, հավաքածուները, նյութերը և ցուցադրությունները:

Ատենախոսության մեջ օգտագործվել են ինչպես աշխարհի մի շարք թանգարանների (Ազգագրության թանգարանների միջազգային խորհուրդ, Դոնի Ռոստովի Ռուս-հայկական բարեկամության թանգարան, «Ռուսաստանի թանգարաններ» արտալ, Մոսկվայի Արևելքի, Սանկտ Պետերբուրգի Ռուսաստանյան ազգագրության, Ամերիկայի հայկական, Ֆրանսիայի հայկական թանգարաններ և այլն), այնպես էլ որոշ վիրտուալ թանգարանների (Մոսկվայի հայկական և ազգերի մշակույթի թանգարան, Հայկական գորգի թանգարանի և այլն) էլեկտրոնային բազաները: Օգտագործվել են նաև ազգագրագետների, թանգարանների, մշակույթի ոլորտի աշխատողների հետհարցազրույցների նյութերը:

Գիտական նորույթը: Չնայած մի շարք ուսումնասիրությունների առկայությանը, ժամանակակից հասարակության արդիական խնդիրներից մեկի՝ ազգային ինքնության ձևավորման գործընթացում ազգագրության թանգարանների և ազգագրական հավաքածուների ու ցուցադրությունների դերին նվիրված ամբողջական հետազոտություն չկա: Աշխատանքի գիտական նորույթն այն է, որ ատենախոսության մեջ առաջին անգամ.

- ցույց է տրվել ազգագրության թանգարանի, հավաքածուի և ցուցադրության նշանակությունը ազգային ինքնության ձևավորման և ակտիվացման համատեքստում,
- համակարգվել և ուսումնասիրվել է Հայաստանի և սփյուռքի ազգագրական հավաքածուներ և ցուցադրություններ ունեցող թանգարանների գործունեությունը, որոնցով էլ պայմանավորված է դրանց ազդեցությունն արդի հայ ինքնության ձևավորման վրա,
- հստակեցվել են արդի պայմաններում ազգագրության թանգարանների գործունեության վրա ազդող սոցիալ-քաղաքական և մշակութային գործոնները,
- ընդհանրացվել է ազգագրական արտեֆակտներ ներկայացնելու համար հաղորդակցական միջավայր ստեղծելու Հայաստանի թանգարանների փորձը,

- հիմնավորվել է ազգագրության թանգարանների և նմանատիպ հավաքածուներ ու ցուցադրություններ ունեցող թանգարանների ազգային ինքնության ձևավորման և ակտիվացման գործընթացի վրա ներազդելու իրական հնարավորությունը,
- առանձնացվել են թանգարանագիտության ավանդական մոտեցումներից էապես տարբերվող ոչ թանգարանային հարթակներում ազգագրական արտեֆակտները ներկայացնելու տեսակները և բացահայտվել են ազգային ինքնությունը ձևավորելու ու ակտիվացնելու գործընթացի վրա դրանց ազդեցության եղանակները:

Աշխատանքի կիրառական նշանակությունը: Աշխատանքի տեսական և կիրառական նշանակությունը հիմնավորվում է ազգագրության և ազգագրական հավաքածուներ և ցուցադրություններ ունեցող ոչ մասնագիտացված թանգարանների գործունեության վերլուծությամբ, ժամանակակից հասարակության մեջ դրանց դերի ու նշանակության մասին պատկերացումների ընդլայնմամբ: Թանգարանների գործունեության համակողմանի ուսումնասիրությունը մեծապես կնպաստի ազգային ինքնության ձևավորմանը:

Ատենախոսության նյութերի բազմակողմանի ուսումնասիրությունը կօժանդակի ազգագրական հավաքածուների համալրմանը, գիտական հայեցակարգեր մշակելուն, ինչպես նաև ազգագրական ու ազգագրական հավաքածուներ և ցուցադրություններ ունեցող ոչ մասնագիտացված թանգարանների մշակութազանգվածային միջոցառումների և ցուցադրությունների նախագծեր մշակելուն: Ներկայացված է նաև Հայաստանում բացօթյա թանգարան ստեղծելու հնարավորությունը: Ուսումնասիրված նյութերը կարող են ընդգրկվել թանգարանագիտության դասավանդման հատուկ դասընթացներում:

Աշխատանքի պրակտիկան հավանությունը: Ատենախոսական աշխատանքը քննարկվել է ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի արդիականության ազգաբանության բաժնում: Աշխատանքի որոշ հիմնախնդիրների վերաբերյալ 2012-2016 թթ. զեկուցումներ են կարդացվել Մոսկվայում, Երևանում, Գյումրիում կայացած հանրապետական և միջազգային գիտաժողովներում: Ուսումնասիրության որոշ դրույթներ հրատարակվել են հոդվածների ձևով:

Աշխատանքի կառուցվածքը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, չորս գլուխներից,

որոնք իրենց հերթին բաժանված են ենթագլուխների և ենթաթեմաների, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից, հավելվածից:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ներածության մեջ հիմնավորված են թեմայի ընտրությունը, կարևորությունը և ուսումնասիրման անհրաժեշտությունը: Ձևակերպված են ատենախոսության հիմնական նպատակներն ու խնդիրները, հիմնավորված է գիտական նշանակությունը: Ներկայացված են թեմայի ուսումնասիրվածության աստիճանը, առանձնահատկություններն ու հետազոտության սկզբունքները:

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ՀԱՎԱՔԱԾՈՒՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ատենախոսության առաջին գլուխը նվիրված է թանգարանի, որպես սոցիալական հիշողության ինստիտուտի, կայացման տեսական հարցերին, հավաքածուների ձևավորմանը, թանգարանների՝ որպես հիշողության պահպանման և ազգային ինքնության ձևավորման և ակտիվացման ձևի գործառույթներին և խնդիրներին: Գլուխը բաժանված է ենթագլուխների և ենթաթեմաների:

«Թանգարանի՝ որպես սոցիալական հիշողության ինստիտուտի, կայացումը» ենթագլխում անդրադարձել ենք թանգարանի հավաքածուների ձևավորման խնդիրներին, ինչպես նաև Հայաստանում ազգագրական հավաքածուների ձևավորման պատմությանը: Թանգարանը դիտարկվում է որպես սոցիալական հիշողության ինստիտուտ, որը նախատեսված է առօրյա օգտագործումից գիտակցաբար հանված և մշակութային ու բնական ժառանգության արժեքավոր մաս կազմող առարկայի, դրա օգտագործողի ու պատրաստողի վերաբերյալ ամբողջական տեղեկատվություն հավաքագրելու, պահպանելու, հանրահռչակելու և սերունդներին փոխանցելու համար:

Ուսումնասիրողները թանգարանի, որպես սոցիալական հիշողության ինստիտուտի, ձևավորումը

կապում են հավաքածուների տարերային հավաքման ու «մուսեոններում» դրանք ի ցույց դնելու հետ: Հավաքածուներն ընդգրկում էին նախապես չուսումնասիրված և չդասակարգված արտասովոր իրեր: Հավաքածուների նկատմամբ մոտեցումը փոխվեց միջնադարում, երբ քրիստոնեական սրբությունների և մասունքների, թանկարժեք հագուստի և եկեղեցական սպասքի պահպանման համար առանձնացվեցին հատուկ գանձարաններ:

XIX դ. վերջին և XX դ. սկզբին ավարտվում է թանգարանի, որպես սոցիոմշակութային ինստիտուտի, ձևավորումը: Այդ թվում աստիճանաբար դասակարգվում են նաև ազգագրական հավաքածուները:

Հայաստանում հավաքածուների ստեղծման և թանգարանների կայացման պատմությունն ուսումնասիրողներն առաջին հավաքածուները համարում են V դ. եկեղեցիներին կից ստեղծված գանձարանները: Անդրկովկասի, այդ թվում Հայաստանի հնագիտական, պատմական, ազգագրական նյութի առաջին նպատակաուղղված հավաքագրումն ու ուսումնասիրումն իրականացվել է 1852 թ. Թիֆլիսում հիմնադրված Կայսերական ռուսական աշխարհագրական ընկերության Կովկասի բաժնի կողմից: Հետագայում՝ 1867 թ., այդ հավաքածուի հիման վրա Թիֆլիսում ձևավորվեց Կովկասի թանգարանի ժողովածուն: Մինչխորհրդային շրջանում, իր նշանակությամբ ու տիպով, կարևոր դեր ուներ Թիֆլիսի ազգագրական-հնագիտական թանգարանը, որը հիմնադրվել էր Հայոց ազգագրական ընկերության ղեկավար Երվանդ Լալայանի կողմից 1907-1908 թթ.:

«Թանգարանների՝ որպես հիշողության պահպանման և ազգային ինքնության ձևավորման, ակտիվացման միջոցի գործառույթները և խնդիրները» ենթագլխում դիտարկվում են ազգագրական հավաքածուների ներկայացված հատվածի՝ ցուցադրությունների, հրատարակությունների, զանգվածային կրթամշակութային միջոցառումների դերն ազգային ինքնության ձևավորման գործում: Քննարկված են «թանգարան», «մշակութային, ազգային ինքնություն», «հիշողություն» հասկացություն-ները և բացահայտված է դրանց փոխկապակցվածությունը:

Ակնհայտ է, որ թե՛ մշակութաբանները, թե՛ թանգարանագետները թանգարանը (այդ թվում պատմական ուղղվածության տարբեր՝ պատմության, ազգագրության, ժողովրդական արվեստի,

երկրագիտական և այլն) դիտարկում են որպես կոլեկտիվ հիշողության պահպանման և վերականգնման ձևերից մեկը: Վերջինս հոգեբանները, սոցիոլոգները, պատմաբանները համարում են ազգային ինքնության ձևավորման բաղկացուցիչ մասը: Եթե պատմության թանգարանների ազգագրության հավաքածուների և պատմական իրադարձությունների վերլուծությունը ներկայացնում է ժամանակների կապը, ապա ազգագրության թանգարանները նույնը ներկայացնում են ավանդական անցյալը կապելով արդի մշակույթի հետ՝ բացահայտելով առանձին երևույթների արմատները: Ազգագրության թանգարանի խնդիրն է ապահովել «մշակութային ժառանգորդությունը»՝ ներկա և ապագա սերունդներին փոխանցելով պահպանված կամ փոխակերպված ավանդույթները: Այսպիսով, ազգագրության և ազգագրական հավաքածուներ ու ցուցադրություններ ունեցող թանգարանների հավաքածուներում արդեն իսկ պահպանվող հիշողության այժմեականացումը նպաստում է ազգային ինքնության ձևավորմանը և/կամ ակտիվացմանը:

«Ազգագրական ցուցադրությունների դասակարգումը Հայաստանի և սփյուռքի որոշ երկրների թանգարանների օրինակով» ենթագլխում ներկայացված են ազգագրական հավաքածուների և ցուցադրությունների ձևավորման ընթացքը և խնդիրները, կատարված է դրանց դասակարգման փորձ:

Ազգաբանության հետ սերտ կապ ունեցող ազգագրության թանգարանների տիպաբանության առաջին խմբում ընդգրկված են շենքային պայմաններ ունեցող մասնագիտացված թանգարանները: Որպես օրինակ դիտարկված են Հայաստանի ազգագրության պետական թանգարանը (ՀԱՊԹ, այժմ՝ Սարդարապատի հերոսամարտի հուշահամալիր, հայոց ազգագրության և ազատագրական պայքարի պատմության ազգային թանգարան,), նախկինում նրա մասնաճյուղ, իսկ այժմ ինքնուրույն թանգարանի կարգավիճակ ստացած Գյումրու ժողովրդական ճարտարապետության և քաղաքային կենցաղի, Բերդ քաղաքի պատմության և կենցաղի, ինչպես նաև «Դիլիջան» ժողովրդական ճարտարապետության արգելոց-թանգարանի հավաքածուները և ցուցադրությունները:

Հաջորդ խումբը ոչ մասնագիտացված ազգագրական հավաքածուներ և ցուցադրություններ ունեցող թանգարաններն են (պատմության, երկրագիտական և որոշ հուշային): Ատենախոսության

մեջ որպես օրինակ քննարկված են Հայաստանի պատմության պետական թանգարանի (այժմ՝ Հայաստանի պատմության թանգարան, ՀՊԹ), Երևան քաղաքի պատմության թանգարանի, Հովհաննես Շարամբեյանի անվան ժողովրդական ստեղծագործության կենտրոնի և դրա Դիլիջանի մասնաճյուղի, ինչպես նաև Փայտարվեստի թանգարանի, Գեղարքունիքի, Շիրակի, Արցախի, Եղեգնաձորի, Գորիսի, Դիլիջանի, Սիսիանի Ն. Ադոնցի անվան, Էջմիածնի պատմաազգագրական, Հրազդանի, Կապանի, Լոռի-Փամբակի բնակչության կենցաղի ու մշակույթի լոկալ առանձնահատկությունները ներկայացնող երկրագիտական, Սիլվա Կապուտիկյանի, Դսեղի Հովհաննես Թումանյանի, Գյումրու Ավետիք Իսահակյանի և Հովհաննես Շիրազի, Երևանի Հովհաննես Թումանյանի, Արամ Խաչատրյանի, Ավետիք Իսահակյանի հուշային թանգարանների հավաքածուները և ցուցադրությունները:

Քննարկված է նաև ազգագրության թանգարանի ամենատարածված և արդյունավետ ձևերից մեկի՝ «սկանսեն» տիպի բացօթյա թանգարանի գործունեության առանձնահատկությունները և Հայաստանում նմանատիպ թանգարան ստեղծելու հնարավորության հարցը: Նկատի ունենալով պետական և մասնավոր ոլորտների կողմից զբոսաշրջային բիզնեսի ու բնակչության՝ իր արմատների նկատմամբ տարեցտարի աճող հետաքրքրությունը, հիմնավորված է նախկինում կազմված նմանատիպ նախագծերի վերակենդանացման և իրականացման տարբերակն ավանդական յուրահատկությունները դեռևս պահպանած ՀՀ Սյունիքի մարզի Խնձորեսկ, Արարատի մարզի նախկինում կավագործությամբ հայտնի Յուվա (այժմ Շահումյան) գյուղերի, Շիրակի մարզի Սառնաղբյուր գյուղի կենտրոնական թաղամասի թանգարանացման միջոցով:

Ազգային ինքնության պահպանման գործում առանձնահատուկ դեր ունեն սփյուռքում գործող թանգարանները: Դրանցից ոչ մեկը տեսակով ազգագրական չէ, սակայն հավաքածուների և ցուցադրությունների գերակշիռ մասը բնութագրում են այն տարածքների կենցաղն ու մշակույթը, որտեղից տեղափոխվել են տվյալ սփյուռքահայ համայնքի ներկայացուցիչները կամ նրանց նախնիները: Այս ենթախմբում ներկայացված են Դոնի Ռոստովի Ռուս-հայկական բարեկամության, Մոսկվայի Արևելքի, Սանկտ Պետերբուրգի Ազգագրության ռուսական, Ամերիկայի հայկական,

Ֆրանսիայի հայկական և այլ թանգարանների գործունեությունը, հավաքածուներն ու ցուցադրությունները:

Համակարգչային տեխնիկայի և համացանցի զարգացմանը զուգահեռ ստեղծվեցին նաև վիրտուալ թանգարաններ, որոնցից վերլուծվել է «Հայկական գորգ» վիրտուալ թանգարանը:

Այսպիսով, ազգագրության և նմանատիպ հավաքածուներ ու ցուցադրություններ ունեցող թանգարանները, որպես սոցիալական հիշողության պահպանման ինստիտուտ, իրենց ձևավորման և զարգացման ընթացքում հավաքածուների և ցուցադրությունների միջոցով սերունդներին են փոխանցում նյութական և ոչ նյութական մշակույթի տարրերը՝ ներազդելով Հայաստանում և սփյուռքում ապրող հայերի ազգային ինքնության ձևավորման, վերականգնման, ակտիվացման գործընթացի վրա:

ԳԼՈՒԽԵՐԿՐՈՐԴ

ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ՀԱՎԱՔԱԾՈՒՆԵՐԸ ՈՐՊԵՍ ԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐ

Երկրորդ գլխում ազգագրական արտեֆակտը վերլուծվում է որպես գիտական ուսումնասիրությունների սկզբնաղբյուր: Հիմնավորապես քննարկվում է հավաքածուի թանգարանային ցուցադրություններում և հրատարակություններում ներկայացված հատվածի տեղեկատվական ներուժը՝ որպես հավաքածուների և ցուցադրությունների հանրայնացման ամենատարածված ձև:

«Ազգագրական սկզբնաղբյուրագիտությունը որպես թանգարանագիտության ոլորտ» ենթագլխում, ազգագրական հավաքածուների ուսումնասիրության հիման վրա, ներկայացվել է դրանց դերն ազգաբանության, որպես գիտության, զարգացման գործում: Հայաստանում ազգագրական հավաքածուների ստեղծման անհրաժեշտությունն առաջին անգամ գիտականորեն ձևակերպվել է Հայկական ազգագրական ընկերության կողմից:

Պետք է նշել, որ միևնույն առարկան թանգարանի ուղղվածությամբ և առաջադրված խնդիրներով պայմանավորված, տարբեր կերպ է մեկնաբանվում. պատմության թանգարանում այն դիտարկվում է որպես տվյալ ժամանակաշրջանի մասին տեղեկատվության աղբյուր, ժողովրդական ստեղծագործության թանգարանում՝ որպես ոչ պրոֆեսիոնալ ժողովրդական արվեստի նմուշ, հուշային թանգարանում՝ անձնական

օգտագործման իր, ազգագրության թանգարանում՝ որպես ավանդական կենցաղի ու մշակույթի տարր՝ իր կենցաղավարման միջավայրում: Թանգարանային առարկայի մեջ «թաքնված» տեղեկատվության տարբերակված վերլուծությունը հնարավորություն է ընձեռում հարուստ գիտելիքներ ստանալ ժողովրդի կենցաղի ու մշակույթի առանձնահատկությունների, դրանց ստեղծման և կենցաղավարման ժամանակաշրջանի ու միջավայրի մասին:

Ատենախոսության մեջ քննարկված են իրային, պատկերային, ֆոտո և այլ սկզբնաղբյուրները, ինչպես նաև քիչ օգտագործվող ձայնային, հոտային, վարքային սկզբնաղբյուրների օգտագործման հնարավորությունները թանգարանային ցուցադրության մեջ: Որպես սկզբնաղբյուր դիտարկված են զինագործ և ոսկերիչ Չիֆթալարյանների գերդաստանի, նվիրատու Հակոբ Ջելալյանի (ՀԱՊԹ) հավաքածուները, կատարված է ասեղնագործ գորգերի, ասեղնագործության և ժանեկագործության նմուշների (Հ. Շարամբեյանի անվան ժողովրդական ստեղծագործության կենտրոն), Դ. Երմակովի, Ա. Վրույրի և այլոց լուսանկարների հավաքածուների համեմատական վերլուծություն՝ տեղեկատվության էթնիկ և սոցիալական ուղղվածության տեսանկյունից:

«Հավաքածուի ներկայացված մասում սկզբնաղբյուրի տեղեկատվության արտահայտվածությունը» ենթագլխի *«Թանգարանային ցուցադրություններ»* մասում թանգարանային ազգագրական արտեֆակտը դիտարկվում է իր կենցաղավարման միջավայրում՝ հաշվի առնելով տվյալ պատմաազգագրական շրջանում վերջինիս տարածման առանձնահատկությունները, ինչպես նաև բացահայտելով առարկայի կապը որոշակի միջոցառումների, երևույթների, անձանց հետ: XX դ. սկզբին ազգագրական ցուցադրությունը կառուցվում էր առանձին վերցրած առարկայի շուրջ, այնինչ արդի թանգարանային ցուցադրությունում ներկայացվող առարկան ընկալվում է ոչ թե մեկուսի, այլ գործընթացների, մարդկանց հետ միասին՝ հաշվի առնելով պատրաստողի և օգտագործողի, մարդու և առարկայի միջև եղած փոխադարձ կապը:

Ցուցադրվող բնօրինակը կարող է այցելուի ուշադրությունը գրավել, առաջացնել հույզեր, ստեղծել պատմական ժամանակաշրջանի և կենցաղավարման միջավայրի պատրանք, պատմական անցյալի ամբողջական կամ մասնակի

պատկանելության զգացողություն: Որպես օրինակ դիտարկված են Հայաստանի ազգագրության, պատմության, Գյումրու ժողովրդական ճարտարապետության և քաղաքային կենցաղի, Բերդ քաղաքի պատմության և կենցաղի, Գեղարքունիքի երկրագիտական թանգարանների ցուցադրությունները, ինչպես նաև «Դիլիջանի քաղաքային կենցաղը. XIX դ. վերջ – XX դ. սկիզբ» ցուցահանդեսը:

Թանգարանի հրատարակություններին վերաբերող մասում, թանգարանների հրատարակությունների հիմք կազմող ազգագրական հավաքածուների, ինչպես նաև առարկաների համեմատական վերլուծության միջոցով, ազգային ինքնությունը քննարկվել է հայկական ժողովրդական ստեղծագործության, մշակույթի տարրերի ժառանգորդային հաջորդականության համատեքստում:

Այսպիսով, նյութական և ոչ նյութական տարրը թանգարանում ստանում է թանգարանային սկզբնաղբյուրի կարգավիճակ, ուսումնասիրվում, ցուցադրվում, հրատարակվում ու հանրահռչակվում է՝ ազգային մշակույթը փոխանցելով սերնդեսերունդ, ինչով էլ ակտիվացնում է պատմական հիշողությունը և ներազդում ազգային ինքնության ձևավորման և ակտիվացման վրա:

ԳԼՈՒԽԵՐՐՈՐԴ

ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ՀԱՎԱՔԱԾՈՒՆԵՐԸ ՈՐՊԵՍ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՄԻՋՈՑ ԵՎ ԹԱՆԳԱՐԱՆԻ ԿՐԹԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲԱՂԿԱՑՈՒՑԻՉ ՄԱՍ

«Թանգարանային հաղորդակցությունը որպես կրթամշակութային գործունեության հիմք» ենթագլխում վերլուծության է ենթարկվել թանգարանի, որպես դաստիարակչական կենտրոնի, դերն ու նշանակությունը: Այսօր արդիական է դարձել թանգարանային հաղորդակցության միջավայրում անձի ստեղծագործական ներուժն ակտիվացնելն ու զարգացնելը: Այդ միջավայրը ժամանակի պահանջով աստիճանաբար պետք է վերածվի «կենդանի օրգանիզմի», ինտերակտիվ կրթության և հանգստի կենտրոնի՝ իրականացնելու անձի էթնիկ ինքնության ձևավորման կարևորագույն հոգեբանական բաղադրիչներից մեկը՝ հաղորդակցումը: Հայ ժողովրդի ազգային ինքնության ձևավորման վրա թանգարանների կրթամշակութային գործունեության ազդեցությունը ներկայացնելու համար անդրադարձել ենք Հայաստանի տարբեր

թանգարաններում կազմակերպված բազմաբնույթ թեմատիկ միջոցառումներին ***«Կրթամշակութային գործունեության ազդեցությունն ազգային ինքնության ձևավորման ու ակտիվացման վրա Հայաստանի թանգարանների օրինակով»*** ենթագլխում: Անդրադարձել ենք «Օգնություն դպրոցին», «Ժողովրդական համալսարան», «Աթեիստական ընթերցումներ», «Հետաքրքիր հանդիպումների ակումբ», «Ազգագրական հանդիպումներ», «Երկիր, որտեղ ես ծառայում եմ», «Իմ նախնիները, ընտանիքը կամ ինչ ես գիտեմ իմ պապիկների և տատիկների մասին» ծրագրերին, «Սարդարապատի ճակատամարտի տոնակատարություն», «Երգի տոն» միջոցառումներին (ՀԱՊԹ), «Բացահայտենք հայկական գորգի աշխարհը», «Զատիկի հանդես», «Արտասովոր արկածները Երևան քաղաքի պատմության թանգարանում», «Հարսանեկան իրարանցում թանգարանում» ծրագրերին (Երևան քաղաքի պատմության թանգարան) և այլն:

Քննարկվել են նաև էքսկուրսիաների ժամանակ ազգագրական ցուցադրությունները ներկայացնելու առանձնահատկությունները, թանգարանի կրթամշակութային գործունեության մեջ ժամանակին համահունչ նոր ուղղությունները, առաջարկվել է ուսուցողական նախագծի հայեցակարգ:

Ազգագրության և ցուցադրության մեջ հայերի կենցաղին ու մշակույթին նվիրված բաժիններ ունեցող այլ թանգարաններում բնօրինակի կրթամշակութային, տեղեկատվական, հուզական ներուժն օգտագործելը կարող է բավարարիմք դառնալ ավանդական և ոչ ավանդական կրթամշակութային միջոցառումներ կազմակերպելու համար: Վերջինս կնպաստի ազգագրության թանգարանների և ցուցադրությունների, որպես պատմական հիշողության պահպանման և վերականգնման սոցիոմշակութային ինստիտուտի և ազգային ինքնության ձևավորման բաղադրիչի, դերի բարձրացմանը: Թանգարանի կրթամշակութային գործունեության ակտիվացումը, այցելու-թանգարան հարաբերությունների վերանայումը, թանգարանի հաղորդակցական հարթակն ընդլայնելու նպատակով նոր նախագծերի իրականացումը կնպաստի այցելուների թվի աճին: Թանգարանային ավանդական և ոչ ավանդական կրթամշակութային գործունեության ձևերի օգտագործումը թանգարանը կվերածի գիտելիքներ և հմտություններ հաղորդող հաստատության: Էթնոմշակութային ժառանգությունը սերնդեսերունդ

կփոխանցվի՝ նպաստելով ազգային ինքնության ձևավորմանն ու ակտիվացմանը:

ԳԼՈՒԽՉՈՐՐՈՐԴ

ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆՆԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՇՈՒԿԱՅԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԵՎ ԱՐԴԻ ՀԱՅ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

Այս գլխում քննարկված են արդի պայմաններում թանգարանի դերի վերափոխության խնդիրները և առաջարկված են թանգարանի գործունեության արդիականացման ուղիները: Վերլուծված են թանգարանից դուրս՝ ոչ թանգարանային հարթակներում ազգագրական արտեֆակտների օգտագործման ժամանակակից տարբերակները՝ որպես ազգային ինքնության ակտիվացման նոր միջոցների:

«Թանգարանի դերի վերափոխումը ժամանակակից աշխարհում». *«Թանգարանային ցուցադրության արդիականացման խնդիրները»:* Հայաստանի թանգարանների ազգագրական ուղղվածություն ունեցող ցուցադրությունները, որոնք ստեղծված են հիմնականում XX դ. երկրորդ կեսին, ըստ հայեցակարգի չէին կարող ներառել ինտերակտիվության տարրեր և նախատեսված էին պասսիվ դիտորդ-այցելուի համար: Արդեն XXI դ. սկզբին անհրաժեշտություն առաջացավ արմատապես փոխել Հայաստանի թանգարանների և, մասնավորապես, ազգագրական բնույթի ցուցադրություններ ունեցող թանգարանների գործունեության մարտավարությունը և ռազմավարությունը:

Սակայն նորարայնությամբ կամ պահանջվածությամբ հրապուրվելը կարող է *անցանկալի հետևանքների* հանգեցնել, եթե չպահպանվի խելամիտ հավասարակշռություն մշակույթի և գործարարության, տեղեկատվության, գիտելիքի և հաճույքի, ժամանցի կազմակերպման միջև: Որոշ դեպքերում վերականգնված կենցաղավարման միջավայրի գնահատականը, պատմական-ազգագրական նշանակությունը և ազգագրական իրերի օգտագործումը հիմնված է ոչ թե առարկայի կամ իրադարձության գիտական արժեքը ճիշտ գնահատելու, այլ այցելուի հետաքրքրությունն ու երևակայությունը շարժելու դիզայներական լուծումների վրա: Դա հանգեցրել է ինչպես ազգային երանգավորում ստացած երևույթների շրջանառության, այնպես էլ կեղծ և պարաթանգարանների ու փորձարարական կառույցների առաջացմանը:

Այսօր հնարավոր չէ անտեսել *վիրտուալ թանգարանների* գոյությունը, չնայած այն հանգամանքին, որ վերջիններս ավանդական նշանակությամբ թանգարաններ չեն: Նոր տեխնոլոգիաները հնարավորություն են ընձեռում ընդլայնելու գործող թանգարանների հանրահռչակումը, ինչպես նաև ստեղծել նոր, նյութական աշխարհում գոյություն չունեցող թանգարաններ: Սակայն վիրտուալ աշխարհը չի փոխարինում, այլ միայն լրացնում է իրական թանգարանը: Վիրտուալ թանգարաններ ստեղծվում են նաև Հայաստանում. գրեթե բոլոր թանգարաններն ունեն վիրտուալ կայքեր, որոնց մի մասը վիրտուալ շրջագայության հնարավորություն է ընձեռում: Դրանց մի մասը այս կամ այն չափով լուսաբանում է նաև ազգագրական նյութը:

«Ազգագրական արտեֆակտերի այլընտրանքային օգտագործումը որպես ազգային ինքնության ակտիվացման միջոց»: *«Ազգային տարրերի օգտագործումը ժամանակակից արտադրանքում»:* Այսօր շատ դիզայներներ ազգային տարրերը օգտագործում են նորաձևության և զարդերի մեջ: Այս ենթագլխում դիտարկված են Երևանի «Վերնիսաժում», ինչպես նաև Հայաստանի պատմության, Երևան քաղաքի պատմության, Սարդարապատի հերոսամարտի հուշահամալիր, հայոց ազգագրության և ազատագրական պայքարի պատմության ազգային թանգարաններում ու Հ. Շարամբեյանի անվան ժողովրդական ստեղծագործության կենտրոնում պատրաստվող և վաճառվող հուշանվերները:

«Արտեֆակտերի կիրառությունը ներքին հարդարման մեջ»: Վերջին տարիներին սպասարկման ոլորտի բիզնեսի զարգացումը առաջ է բերել ազգագրական արտեֆակտների և թանգարանային հարթակների այլընտրանքային օգտագործման տարբեր ձևեր: Հաճախ ազգային տարրեր պարունակող առարկան կամ դրա կրկնօրինակը, երբեմն նույնիսկ հենց բնօրինակը հայտնվում են խանութների, ռեստորանների, հյուրանոցների ձևավորման մեջ՝ կորցնելով իրենց բուն, սկզբնական նշանակությունը:

«Ազգվածային կրթամշակութային միջոցառումները որպես թանգարանի գործունեության ակտիվացման միջոց»: *«Թանգարանի հարթակների օգտագործումը»*: Թանգարանների կողմից գումար վաստակելու արդյունավետ ձևերից մեկը մատուցվող վճարովի ծառայություններն են՝ ազգային և ժամանակակից տոների ու ծեսերի (հարսանիք,

զինվորական երդման արարողություն, ավարտական վկայագրերի հանձնում, հատուկ էքսկուրսիաների կազմակերպում և այլն), փառատոնների անցկացումը թանգարաններում և հարակից բացօթյա տարածքներում:

«Այլընտրանքային հարթակների օգտագործում»: Այսօր նյութական և ոչ նյութական մշակույթի տարրերը հանրահռչակվում են ոչ միայն թանգարանների տարածքում: Թանգարաններն օգտագործում են պետական, հասարակական և մասնավոր կառույցների կողմից կազմակերպվող տարաբնույթ միջոցառումների հարթակները: Որպես օրինակ վերլուծված են «Մշակութային վերածնունդ» (Դիլիջան), «Տարազֆեստ» (Երևան, Ստեփանակերտ), «ArtExpo», «ԱՊՀ երկրների արվեստ և արհեստ» (Գյումրի), «Հացը լեռներում» (Երևան), «Տոլմայի փառատոն», «Գինու փառատոն» (գ. Արենի), «Թոնրի փառատոն», «Ոսկե փառատոն», «Մեղրի և հատապտուղների փառատոն», «Լեռնային ազնվամորու փառատոն», «Լավաշ» և այլ փառատոնները:

«Զբոսաշրջային բիզնեսի և թանգարանի համատեղումը»: Զբոսաշրջությունը այսօր համարվում է Հայաստանի տնտեսության զարգացող ճյուղերից մեկը: Թանգարանները և զբոսաշրջային կազմակերպությունները մեկ միասնական համակարգի տարրեր են, որոնց գործունեությունն ուղղված է նույն նպատակին՝ մարդկանց տալ նոր պատկերացումներ, զգացողություններ, բարձրացնել նրանց ինտելեկտուալ մակարդակը և խորագիտակությունը (Երուդիցիան), լայնացնել մտահորիզոնը:

Որպես ավանդական թանգարանի և բիզնես մոտեցումների համադրման փորձ ներկայացված են 2012 թ. Դիլիջան քաղաքում մեր կողմից կազմակերպված և 2015 թ.-ից Երևանի «Մետաքսի ճանապարհ» հյուրանոցում իրականացվող նմանատիպ ծրագրերը: Հայաստանում, զբոսաշրջության ակտիվ զարգացման և տնտեսության համար տուրիզմը գերակա ճյուղ հռչակելու պայմաններում, անհրաժեշտ է հասարակության և հատկապես պետության ուշադրությունը հրավիրել թանգարանի և ընդհանրապես մշակութային ժառանգության՝ որպես քաղաքի, մարզի, շրջանի զարգացման կարևորագույն ռեսուրսի վրա: Այդ խնդրին կնպաստի Հայաստանում բացօթյա ազգագրության թանգարանի ստեղծումը, ինչը հնարավոր է պահպանված լոկալ բնական տարածքների և համայնքների

առկայության շնորհիվ՝ 1981 թ.-ին ստեղծված նման նախագծի լրամշակման և իրականացման միջոցով:

Հաշվի առնելով թանգարաններում իրականացվող XXI դ. պահանջներին համահունչ փոփոխությունները, ինչպես նաև ազգագրական արտեֆակտների օգտագործումը ոչ թանգարանային միջավայրում, թանգարանների և բիզնեսի ու զբոսաշրջության սերտ համագործակցությունը, կարելի է փաստել, որ իրավամբ ստեղծվում է այնպիսի միջավայր, որը ներազդում է արդի հայ ինքնության ձևավորման և ակտիվացման վրա:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Թանգարանի՝ որպես սոցիալական հիշողության ինստիտուտի կայացման գործընթացի վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ հավաքածուներում և ցուցադրություններում տեղեկատվության ձևով պահպանվող հիշողությունը, որպես ազգային ինքնության ձևավորման բաղկացուցիչ մաս, կապող օղակ է ազգագրության թանգարանի և ինքնության ձևավորման միջև:

Ամփոփելով ուսումնասիրման առարկան՝ ազգագրության թանգարանների և այլ թանգարանների ազգագրական բնույթի ցուցադրությունների ու հավաքածուների դերը հայ ինքնության ձևավորման գործում, կարելի է առանձնացնել մի շարք դրույթներ:

- Ազգագրական բնույթի ցուցադրություններն ու հավաքածուներն ունեն հայ ինքնության ձևավորման և ակտիվացման գործընթացի վրա ներազդելու իրական հնարավորություն՝ հավաքածուներում կուտակված հիշողության հանրահռչակման միջոցով, ինչը պայմանավորված է մի քանի կարևոր գործոններով:

- Հայաստանի և սփյուռքի ազգագրության ու այլ պրոֆիլի թանգարանների, հավաքածուների և ցուցադրությունների կայացման ու ձևավորման պատմության ուսումնասիրությունն ու դրանց դասակարգումը թանգարանների կայացման ու զարգացման ընթացքում բացահայտեց մի կողմից ազգագրության թանգարանների, հավաքածուների ու ցուցադրությունների, իսկ մյուս կողմից՝ սոցիոմշակութային հիշողության, ազգային ինքնագիտակցության ու ինքնության փոխադարձ կապը: Այսպիսով, թանգարանները՝ հավաքված, ուսումնասիրված, մեկնաբանված, ցուցադրված մշակութային և պատմական հիշողության սկզբնաղբյուրների՝ նյութական և ոչ նյութական մշա-

կույթի տարրերի միջոցով դառնում են յուրատեսակ հիմք, հաղորդակցական միջավայր՝ ազգային ինքնության ձևավորման և/կամ ակտիվացման համար:
- Ազգաբանության և թանգարանագիտության տեսանկյունից ազգագրական արտեֆակտների՝ մշակույթը կրողից անբաժան, իր կենցաղավարման միջավայրում ուսումնասիրությունը հաստատեց այն հսկայական տեղեկատվական դաշտի առկայության փաստը, որն իր մեջ կրում է թանգարանային առարկան: Թանգարանային առարկաներն ու ոչ նյութական մշակույթի տարրերը ուսումնասիրվելուց և ողջ տեղեկատվությունը բացահայտվելուց հետո, դառնում են հավաքածուների հանրահռչակման հիմք և, ժամանակի ընթացքում, ազգային ինքնության խորհրդանիշեր:
-Թանգարանային սկզբնաղբյուրն իր վերջնական արտահայտությունը ստանում է հավաքածուի ներկայացված մասում՝ ցուցադրություններում և հրատարակություններում: Ազգագրական գիտության նվաճումների և առկա փաստական նյութի հիման վրա ազգագրագետ-հետազոտողի և թանգարանային աշխատողի կողմից մեկնաբանված և հաստատագրված թանգարանային առարկայի տեղեկատվական ներուժը դառնում է հավաքածուի ժամանակավոր ներկայացվող մասի՝ թանգարանային ցուցադրության գիտական և գեղարվեստական նախագծի հիմքը: Մեկ տարածքում ցուցադրված բնօրինակները՝ պահպանված հիշողության վկայությունները, ձևավորում են այն նշանային հաղորդակցական միջավայրը, որը ցուցադրության և պատմելու միջոցով ներազդում է այցելուի ազգային ինքնության ձևավորման և ակտիվացման վրա:
- Հայաստանի թանգարանների ազգագրական ցուցադրությունների վերլուծությունը ցույց տվեց տարբեր ուղղվածություն ունեցող թանգարանների կողմից նույն արտեֆակտի մեկնաբանման տարբերությունները: Սակայն դիտարկվում է մեկ ընդհանրություն. ազգագրական ցուցադրությունը բոլոր թանգարաններն օգտագործում են որպես հաղորդակցական միջավայր կրթամշակութային, այդ թվում նաև ազգագրական բնույթի ծրագրեր իրականացնելու համար:
- Թանգարանների ցուցադրություններն ու հրատարակությունները հավաքածուների հանրահռչակման հիմնական ձևերն են, որոնց միջոցով գիտական մեկնաբանություն ստացած մշակութային որոշ

տարրեր ժամանակի ընթացքում վերածվում են ազգային ինքնության խորհրդանիշերի:
-Ազգային ինքնության՝ այդ թվում նաև թանգարանային միջոցներով ձևավորման գործընթացում առանձնահատուկ նշանակություն է ստանում թանգարանի գիտականորեն հիմնավորված զանգվածային մշակութային, էթնոմանկավարժական գործունեությունը:

Թանգարանը որպես յուրահատուկ դաստիարակչական կրթօջախ, որն իրականացնելով տարաբնույթ կրթամշակութային ծրագրեր՝ թեմատիկ էքսկուրսիաներ, դասախոսություններ, խմբակներ, մասսայական միջոցառումներ, մեծապես նպաստել է նյութական և ոչ նյութական մշակույթի տարրերի ուսումնասիրմանը, հավաքմանը, հանրահռչակմանը, սերնդեսերունդ փոխանցմանը՝ այդպիսով նաև ազգային ինքնության ձևավորմանը:

Հայաստանի թանգարանների կրթամշակութային գործունեության վերլուծությունը ցույց տվեց, որ թե՛ ազգագրության և թե՛ ոչ մասնագիտացված թանգարաններն իրենց հաղորդակցական միջավայրն ակտիվորեն օգտագործում են գիտելիքներ, հմտություններ ու մշակութային արժեքներ փոխանցելու, ազգային ավանդույթների նկատմամբ հարգալից վերաբերմունք դաստիարակելու, անհատի ստեղծագործական ունակությունները բացահայտելու և զարգացնելու, ազգային և սոցիալական ճիշտ ուղղվածություն ունեցող և ստեղծագործական մտածողությամբ անձ ձևավորելու, գիտակցության և ենթագիտակցության վրա ներազդող հուզական համակարգ և արժեհամակարգ ստեղծելու համար, որի արդյունքում ձևավորվում է անհատի բարոյական, գեղագիտական և մշակութային-արժեքային կողմնորոշված ներաշխարհն ու ազգային ինքնությունը:

Ազգագրության թանգարանների կրթամշակութային գործունեության արտասահմանյան փորձի ուսումնասիրությունը ցույց տվեց, թե որքան լայն են դրանց հնարավորությունները և որքան չնչին մասն են օգտագործում Հայաստանի թանգարանները: Թանգարանային ժամանցը կարող է ներառել փորձարարական տարրեր, թանգարանային թատրոն, համերգներ, ավանդական տոնակատարություններ, խաղեր, հեռուստահաղորդումներ, հեռուստախաղեր, վիկտորինաներ և այլն: Կրթամշակութային գործունեության ակտիվացումը, այցելու-թանգարան

հարաբերությունների վերանայումը, նոր ծրագրերի իրականացումը թանգարանը կդարձնի հաղորդակցական նոր և մեծ միջավայր՝ նպաստելով այցելուների թվի աճին, տարբեր տարիքային խմբերից բաղկացած լսարանի ձևավորմանը, իսկ թանգարանների աշխատողները կարող են միջնորդ դառնալ գիտելիքների և հմտությունների սերնդեսերունդ փոխանցմանը, դրանով իսկ ներազդելով ոչ միայն մշակութային ժառանգության պահպանման, այլև ազգային ինքնության ձևավորման ու ակտիվացման վրա:

- Հետազոտությունների արդյունքում պարզվեց, որ չնայած XXI դարի սոցիոմշակութային էական փոփոխություններին, թանգարանները շարունակում են կատարել ինչպես ավանդական գործառույթները (պահպանում, ուսումնասիրում, հանրահռչակում), այնպես էլ փնտրում են նոր ուղիներ՝ մշակութային ժառանգությունը նորովի ներկայացնելու համար: XXI դարի հասարակության մեջ կատարվող վերափոխումները՝ պայմանավորված տեղեկատվական հաղորդակցության արագացմամբ և ազգային շարժումների առկայությամբ, մեծացրել են հետաքրքրությունը դեպի ազգային արմատները և՛ մշակույթում, և՛ բիզնեսում, և՛ կենցաղում: Այդ պատճառով անհրաժեշտ է առաջադրել և ներդնել նոր գործառույթներ, որոնք, լրացնելով հները, կսահմանեն արդի ազգագրության թանգարանների և ցուցադրությունների, ինչպես նաև ազգագրական արտեֆակտեր օգտագործող գովազդային, կոմերցիոն կառույցների գործունեության շրջանակները:

- Ուսումնասիրությունը ցույց տվեց, որ ժամանակակից կյանքում ազգագրական արտեֆակտերն օգտագործվում են ոչ միայն թանգարաններում: «Հայկականության» որոշ խորհրդանիշեր թանգարանային սրահներից տեղափոխվել են բիզնես տարածք, ստեղծել «կենդանի» ցուցադրություն՝ անկեղծ հետաքրքրություն առաջ բերելով այցելուների շրջանում:

- Ինչպես ցույց տվեց նյութի վերլուծությունը, վերջին տարիներին հայ ազգային ինքնության ամրապնդման արդյունավետ միջոց են դառնում թանգարանային և ոչ թանգարանային հարթակներում կազմակերպվող զանգվածային մշակութային միջոցառումները, որոնք անհամեմատ մեծացրել են Հայաստանի թանգարանների և պետական, հասարակական, մասնավոր կառույցների համագործակցությունը: Ազգային մշակույթի տարրերի հանրահռչակումը ոչ թանգարանային հարթակներում չպարտադրող հանգստի

կազմակերպման ձևով լուծում է կրկնակի խնդիր. գիտելիքների և հմտությունների փոխանցում սերնդեսերունդ՝ հիմնականում մշակույթը կրողների միջոցով, և ազգային ինքնության ձևավորում, ակտիվացում:

- Ազգագրական, ինչպես նաև ազգագրական իրերի հավաքածուներ և ցուցադրություններ ունեցող թանգարաններն ազգային մշակույթի տարրերը հանրահռչակելու և ազգային ինքնությունն ակտիվացնող կուլտուր-մասսայական միջոցառումներ անցկացնելու համար, այսօր Հայաստանում օգտագործում են բազմաթիվ ոչ թանգարանային հարթակներ: Դրանցից են Հայաստանի գրեթե բոլոր շրջաններում պետական, հասարակական, մասնավոր հաստատությունների կողմից կազմակերպվող տոն փառատոնները՝ մշակութային տարրերը կրողների մասնակցությամբ:

Նոր, ժողովրդական փառատոնային ցուցադրության տարբերակը շարժուն է և փոփոխվող: Այն իրականացվում է ցուցանմուշների և ցուցադրման ձևերի ազատ ստեղծագործական ընտրությամբ՝ ազգաբանություն ուսումնասիրողներին տրամադրելով հարուստ հետազոտական նյութ և ներկայացնում է ազգագրական արտեֆակտների կերպարանափոխությունը սոցիալական փոփոխությունների և մշակույթների փոխազդեցության ներքո: Ազգային ինքնության տարրերն այդտեղ ներկայացվում են մշակույթի կրողների կողմից, փոխհարստացվում հենց տեղում՝ միջոցառման ժամանակ, նպաստավոր պայմաններ ստեղծելով բնակչության՝ թանգարանային հավաքածուների հետ հետագա հաղորդակցության համար: Այդպիսի ոչ ֆորմալ կրթությունը նպաստում է թանգարանից դուրս ազգային ինքնության ակտիվացմանը՝ թանգարանային առարկաների միջոցով:

- Հայաստանի կառավարությունն այսօր մասնակիորեն վերանայում է տնտեսական զարգացման ռազմավարությունը, փորձելով ներառել մշակույթի և տուրիզմի ներուժը: Այս տեսանկյունից անհրաժեշտ է հասարակության և հատկապես պետության ուշադրությունը հրավիրել էթնոհյուրանոցների, էթնոկենտրոնների, բացօթյա թանգարանների վրա, որոնք հնարավոր է կազմակերպել փոքր քաղաքներում և բնակավայրերում: Ազգագրական ցուցադրության և հյուրանոցային, զբոսաշրջային բիզնեսի միաձուլումն արդեն սկսում է կիրառվել Հայաստանում և ակնհայտեն դրադրական ադյունքները և՝

շահույթի ստացման, և՝ ազգային ինքնության ակտիվացման տեսանկյունից:

Այսպիսով, ազգագրական հավաքածուներում, ցուցադրություններում, արտեֆակտներում և ոչ նյութական մշակույթի տարրերում թաքնված տեղեկատվության բացահայտումը, համակարգումը, տիպաբանումը ուսումնասիրումը, ցուցադրումը, հրատարակումը, օգտագործումը թանգարանային և ոչ թանգարանային զանգվածային կրթամշակութային միջոցառումների ժամանակ որոշակիորեն ազդում են հայ ժողովրդի ինքնության ձևավորման և/կամ ակտիվացման գործընթացի վրա:

Ատենախոսության թեմայով հեղինակի հրատարակած աշխատանքները

1. Գևորգյան Լ. Պ., Հայաստանում ազգագրության բացօթյա թանգարան ստեղծելու խնդրի շուրջ // Հայկական լեռնաշխարհի պատմամշակութային ժառանգությունը (միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու), Երևան, 2012, էջ 121-123:
2. Գևորգյան Լ. Պ., «Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ի թանգարանային հավաքածուները. 1988-2013 // Պատմամշակութային ժառանգության պահպանման խնդիրները (միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու), Երևան, 2013, էջ 11-12:
3. Գևորգյան Լ. Պ., Երկրագիտական թանգարանների դերն ազգային ինքնության ձևավորման գործում // ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն. գիտական աշխատություններ XVII, Գյումրի, «Գիտություն» հրատ., 2014, էջ 187-193:
4. Գևորգյան Լ. Պ., Գրիգորյան Ա. Ֆ., Էքսկուրսավարության հիմունքներ, ուսումնամեթոդական ձեռնարկ, Երևան, Հայկարլի, 2015, – 148 էջ:
5. Գևորգյան Լ. Պ., Գորգագործ թանգարանային առարկաների պահպանության և ցուցադրման առանձնահատկությունները // Հայկական հանգույց. գորգարվեստի ավանդույթները, միջազգային գիտաժողով, Երևան, 20-22 նոյեմբերի 2013 թ., զեկուցումներ, Երևան, ՀՊԹ, 2016, էջ 126-137:
6. Գևորգյան Լ. Պ. Ազգագրության բացօթյա թանգարանների ձևավորման սոցիալ-տնտեսական պատճառները // ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազո-

տություններ ի կենտրոն. գիտական աշխատություններ XIX, Գյումրի, «Գիտություն» հրատ., 2016, էջ 201-209:
7. Թանգարանային ցուցադրությունների կազմակերպման հիմունքներ. Ուսումնամեթոդական ձեռնարկ, Երևան, Հայ կարլ ի, 2014, 120 էջ:
8. Геворгян Л. П., Этнографические музеи в контексте пропаганды национальной культуры // Наследие и современность. Информационный сборник Российского НИИ культурного и природного наследия им. Д. С. Лихачёва, № 20, научн. ред. П. М. Шульгин, М., Ин-т Наследия, 2013, с. 140-150.
9. Геворгян Л. П., Этнографические коллекции как первоисточник научных исследований // Историко-культурное наследие. Сборник научно-информационных статей, вып. I, гл. ред. А. С. Пилипосян, Ереван, 2014, с. 167-182.
10. Геворгян Л. П., Становление музея как института социальной памяти // Խոսրով Կոտակից մինչև Կարո Ղաֆադարյան. Կ. Ղաֆադարյանի ծննդյան 110-ամյակին նվիրված գիտաժողովի հիմնադրույթներ, Երևան, 2017, էջ 82-86:
11. Геворгян Л. П., Этнографические коллекции как память культуры // Научный сборник по материалам Международной юбилейной научной конференции «Экология культуры – учение о сохранении культурного наследия и вечных ценностей культуры: к 110-летию со дня рождения академика Д. С. Лихачёва», 26 октября 2016 г., отв. ред. С. Ю. Житенёв. Институт Наследия (Труды Института Наследия), М., 2017, с. 24-35.
12. Геворгян Л. П., Мецаморские печати-штампы эпохи бронзы как первоисточник для археологических и этнографических реконструкций, «Մեծամորյան ընթերցումներ I». Նյութերի ծողովածու միջազգային գիտաժողովի, նվիրված Մեծամոր հնավայրի 2016 թ. պեղումների և դաշտային հետազոտությունների արդյունքներին, Երևան, 2017 թ., էջ 356-366:

РЕЗЮМЕ

В последние годы, в связи с возрастающим вниманием общества к своим корням, своей национальной идентичности особое место выделяется феномену музея как институту социальной памяти. Музейные собрания и созданные на их основе музейные экспозиции представляют собой особую научно-художественную коммуникационную среду, в которой реконструируется опредмеченная память. Рассматривая процесс становления музея как института социальной памяти, можно отметить, что именно сохранённая в коллекциях и экспозициях в виде информации, носителями которой являются этнографические артефакты, *память*, как одна из составных частей формирования национальной

идентичности, является связующим звеном между этнографическим музеем и процессом формирования национальной идентичности.

Анализируя роль этнографических музеев и музеев других профилей, которые включают этнографические экспозиции и коллекции, можно заключить, что они имеют *реальную возможность* влияния на процесс формирования и активизации национальной идентичности армян посредством актуализации и пропаганды уже накопленной памяти, что обуславливается несколькими *важными обстоятельствами*.

- Музеи, посредством накопленных, исследованных, интерпретированных, экспонированных источников культурной и исторической памяти - предметов материальной и элементов нематериальной культуры, становятся своеобразной базой, *коммуникативным пространством* для формирования и/или активизации национальной идентичности.
- Исследование этнографических артефактов, с точки зрения этнографической науки и музееведения, *в сфере своего бытования и нераздельно от носителя культуры* подтвердило факт наличия огромного *информативного поля*, которое заключает в себе музейный предмет.
- Своё окончательное выражение музейный источник получает в презентуемой части коллекции: *экспозиции и музейных публикациях*. Подобранные в едином пространстве группы подлинных предметов – свидетелей сохранённой памяти, формируют ту *знаковую коммуникативную среду*, которая, посредством показа и рассказа, оказывает активное влияние на процесс формирования и/или активизации национальной идентичности включённого в него посетителя.
- Анализ этнографических экспозиций музеев Армении показал *различия в* экспозиционной интерпретации одних и тех же артефактов различными по профилю музеями.
- Музейные экспозиции и публикации – основные способы популяризации коллекций музеев, посредством чего некоторые научно интерпретированные этнографические артефакты становятся, со временем, символами национальной идентичности.
- В процессе формирования национальной идентичности, в том числе, музейными средствами, особое значение приобретает *научно обоснованная культурно-массовая этнопедагогическая деятельность музеев*.

- Анализ культурно-образовательной деятельности музеев Армении показал, что и этнографические и непрофильные музеи *активно используют* свою коммуникативной базу для передачи традиционных конкретных знаний, навыков и культурных ценностей из поколения в поколение; воспитания уважения к национальным традициям; выявления и развития творческих способностей; формирования духовно богатой, национально и социально

направленной, творчески мыслящей личности, способной участвовать в социальном и духовном развитии общества; целенаправленного создания материальных, духовных условий для развития личности, формирования системы ценностей; создания системы эмоционального воздействия на сознание и подсознание, которое формирует нравственный, эстетический и ценностно-ориентационный мир личности и национальную идентичность.

- Учитывая изменения, которые происходят в обществе в XXI веке, когда, на фоне убыстрения информативности и возрастания роли национальных движений, наблюдается повышение интереса к своим истокам и национальным формам традиционной культуры и в быту, и в бизнесе, необходимо *сформулировать и внедрить новые функции*, которые, *дополняя существующие*, определяют спектр деятельности современных этнографических музеев и экспозиций, а также коммерческо-рекламных этнографических выставок и других структур, использующих этнографические артефакты в различных сферах своей деятельности.

- Исследование показало, что в современной жизни общества этнографические артефакты презентуются *не только в музейных экспозициях*.

- Как показал анализ материала, эффективным способом активизации современной национальной идентичности армян являются *культурно-массовые мероприятия,* организуемые как на музейных, так и на альтернативных площадках. Предоставление своей территории для проведения традиционных и современных праздников и ритуалов значительно активизировало деятельность музеев Армении, создало и закрепило связь между музеями и государственными, частными, общественными структурами. Пропаганда элементов национальной культуры на открытой площадке в ненавязчивой форме организации досуга решает двуединую задачу: передача знаний и культуры из поколения в поколение, посредством, в основном, носителей культуры и воспитание, активизацию национальной идентичности.

Новый народно-фестивальный тип экспозиции мобилен и изменчив, формируется в свободном творческом выборе экспонатов и способов их экспонирования, даёт богатый материал для исследователей этнологии современности, наглядно демонстирует трансформацию элементов культуры под воздействием социальных перемен и взаимовлияния культур, национальная идентичность преподносится самими ее носителями и взаимообогащается ее элементами прямо во время мероприятия.

- Сегодня Армения частично пересматривает стратегию экономического развития, пытаясь задействовать потенциал культуры и туризма. В этих условиях необходимо обратить внимание общества и, особенно государства, на музей и культурное наследие как на важнейший ресурс развития города, региона,

страны. Одной из сторон индустрии туризма следует рассматривать этно-гостиницы, рестораны, центры, музей под открытым небом, которые возможно организовать в небольших городах и посёлках. Сращивание этнографической экспозиции и гостинично-туристического бизнеса уже нашло своё отражение и получило положительные результаты в Армении и с точки зрения прибыли, и с точки зрения активизации национальной идентичности. Открытым остается вопрос реализации проекта музея под открытым небом, что привело бы к появлению нового крупного научно-культурного центра с широкими возможностями развития туристического бизнеса.

Таким образом, выявление, систематизация, типология и всестороннее изучение заложенной в этнографических коллекциях, артефактах и элементах нематериальной культуры различного рода информации, их экспонирование, опубликование, использование во время культурно-образовательных, массовых музейных и не музейных мероприятий в значительной мере влияют на процесс формирования и/или активизации национальной идентичности армян в современном обществе.

Lianna Poget Gevorgyan

THE ROLE OF ETHNOGRAPHIC EXPOSITIONS IN THE CONTEXT FOR FORMATION OF MODERN ARMENIAN IDENTITY

SUMMARY

The museum establishment process analysis as an institute of social memory assumes that memory which exists in the form of information in collections and expositions, as a part of the process of the national identity formation is a link between the ethnographic museum and national identity.

By summarizing the role of the national collections and expositions exhibited in ethnographic and other museums in the formation of Armenian national identity it is possible to point out several clauses.

- Museum exhibitions and collections have a real possibility to impact on the process of Armenian national identity formation and activation by publicizing the accumulated memory in collections, which is conditioned upon to some important factors.
- The study and the categorization of establishment and formation history of Armenian and Diaspora’s ethnographic and other types of museums, collections, and exhibitions discovered the mutual relationship between ethnographic museums and collections, on one hand, exhibitions and socio-cultural memory, and national identity, on the other hand.

- The research confirmed that a museum subject holds a huge information field in it.
- A museum source receives its final representation in the presented part of the collection; on exhibitions and publications.
- The analysis of Armenian museums' ethnographic exhibitions revealed the differences between the interpretation of the same artifact from the point of view of different museums.
- The exhibitions and publications of museums are the main ways of the popularization of collections by which some of the scientifically described cultural elements become symbols of national identity.
- Scientifically substantiated mass cultural, ethnic-pedagogical activity done by the museums gains an extraordinary role in the formation of national identity.

The research has shown that despite sociocultural changes in 21st century museums continue to accomplish not only the traditional functions (such as reservation, investigation, popularization), but also try to find out new ways of presenting cultural heritage. The transformations of the 21st century in society connected with the increased speed of information exchange and existence of national movements have increased the interest towards national roots in culture, in business, as well as in daily life.

The research has shown that in modern life ethnographic artifacts are presented not only in museum expositions.
- Some symbols which represent Armenian culture has moved from museums to business area and created live exhibitions by awakening sincere interest among visitors. This kind of informal education promotes the establishment of national identity outside of museums with help of items, which belong to museums.
- The fusion of national exhibition and business of hospitality and tourism already emerges in Armenia and positive effects on both receiving profit and activation of national identity become obvious.

All in all, identification, systematization, typology, investigation, popularization, publication and utilization of underlying information in ethnographic collections, exhibitions and artifacts during the museum and non-museum mass cultural and educational events have a certain impact on the process of Armenian national identity formation and activation.